



«Գարակէօզեան» Հաստատութեան Ուսումնական Ցատուկ Կարիքներ Ունեցողներու Մանկավարժական Կեդրոնի Բացումը

0 Գաղութային March 5, 2015

PRINT EMAIL A- A+



«Գարակէօզեան» Հաստատութեան ուսումնական յատուկ կարիքներ ունեցողներու մանկավարժական կեդրոնի բացումը կատարուեցաւ չորեքշաբթի, 4 մարտ 2015-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, ՔԱՀԼ-ի շէնքին մէջ: Կեդրոնի ժապաւէնը կտրելէն ետք, ներկաները այցելեցին բաժանմունքի ութ սենեակները, ապա հիւրերն ու ներկաները խմբուեցան սրահ, ուր տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւնը:

Ձեռնարկը սկսաւ Լիբանանի և Հայաստանի քայլերգներով: Բացման խօսքով հանդէս եկաւ «Գարակէօզեան» Հաստատութեան տնօրէն Սերոբ Օհանեան: Ան ողջունեց ներկաները և ըսաւ, որ կեդրոնի հիմնական նպատակն է հայ մանուկին նեցուկ կանգնիլ և մասնագիտական ուղղութիւն տալ բոլոր հայ աշակերտներուն, որոնք ուսումնական

և կրթական զանազան դժուարութիւններ կը դիմագրաւեն: Ան շնորհակալութիւն յայտնեց «Կոկիկեան», «Կիլպէնկեան», «Պապիկեան» հիմնադրամներուն, ՔԱՀԼ-ի տնօրէնութեան, Պարսուսեան ընտանիքին և «pontifical mission»-ին, որոնց շնորհիւ կեդրոնը կը վայելէ նիւթական և բարոյական աջակցութիւն ու համագործակցութիւն:

Խօսք առաւ ՔԱՀԼ-ի տնօրէն պատուելի Սեպուհ Թերզեան: Ան յիշեց, որ ՔԱՀԼ-ի մէջ անցեալին պատասպարուած են հայ բազմաթիւ անկարներ ու կարիքաւորներ: ՔԱՀԼ-ի հիմնադիրները հաւատքով իրենց քրիստոնէական կեանքը բաժնեկցած են հայ ազգի զաւակներուն հետ: Ան նկատել տուաւ, որ այսօր ալ կեդրոնը տարբեր հաստատութիւններու հետ համագործակցելով կը շարունակէ օգտակար դառնալ այս անգամ հայ աշակերտին: Ան աւարտեց խօսքը ըսելով, որ հայ աշակերտը ամէն գնով պէտք է մնայ հայ դպրոցին մէջ՝ տալով իր լաւագոյնը, որպէսզի կարելի ըլլայ պատրաստել ապագայ գիտակից, հաւատացեալ, ուսեալ և ազգասէր սերունդ մը:

Ապա խօսք առաւ «Գարակէօզեան» Հաստատութեան ուսումնական կարիքներ ունեցողներու մանկավարժական բաժանմունքի պատասխանատու ու վարիչ Յասմիկ Տօնոյեան-Նալպանտեան: Ան սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուց կեդրոնի նպատակը, որ է նեցուկ կանգնիլ ուսումնական դժուարութիւններ դիմագրաւող մանուկներուն, որպէսզի կարենան իրենց լաւագոյնը տալ կրթական համակարգին մէջ, ինչպէս նաև սատար կանգնիլ հոգեբանական հարցերու, որոնք կրնան պատճառ դառնալ մանուկին ուսումնական և ընկերային յառաջդիմութեան: Ան նշեց, որ կեդրոնը կը տրամադրէ ուղղախօսական, ուղղավարժական, հոգեշարժական, հոգեբանական, վարկագիծի բարեփոխման, խորհրդատուութեան գնահատման և միջամտութեան ծառայութիւններ: Ըստ տուեալներու, կրթական տարբեր հաստատութիւններէ և հայկական վարժարաններէ 166 աշակերտներ կ'օգտուին կեդրոնի ծառայութիւններէն, 19 մասնագէտներով և պաշտօնեաներով կեդրոնը յառաջ կը տանի իր առաքելութիւնը: Ան շեշտեց, որ հայ դպրոցը հայուն կենսական աւիշն է, ուր կը կերտուի ու կը կազմուի հայու հոգին: Տօնոյեան-Նալպանտեան եզրափակեց խօսքը ըսելով, որ ջանակիր դառնալը հայ դպրոցին: Հայ դպրոցը ըլլայ մեր ճիտին պարտքը, ուսման ջանքը և հայելին, ապա մէջբերեց Կոմիտաս վարդապետի խօսքը. «Եթէ հայ մանուկը չի հասկնար ձեր դասաւանդածը, յանցանքը ձերն է, չէք կրցած հասկնալ անոր հոգին»:

Ապա հերթաբար խօսք առին «Կիլպէնկեան» հիմնադրամի հայկական բաժինի տնօրէն Անի Կարմիրեան, «Պապիկեան» հիմնադրամի տնօրէն Քրիսթինա Պապիկեան-Ասսաֆ, «Կոկիկեան» հիմնադրամի տնօրէն Սուհէլա Հայթ, «Pontifical Mission of Lebanon» Հաստատութեան տնօրէն Միշել Քոսթանթին, որոնք բոլորն ալ իրենց ուղերձներով բարձր գնահատեցին կեդրոնի բացումը: Քաջակերեցին ուսման կարևորութիւնը մեր հասարակութեան մէջ:

Ձեռնարկին ելոյթ ունեցաւ նաև Կարպիս Մարգարեան: Ան նկատել տուաւ, որ կեդրոնը արդիւնք է տարբեր հաստատութիւններու միջև եղած շերտ համագործակցութեան և հաստատեց, որ միասնական աշխատանքը միշտ ալ երաշխաւորուած է յաջողութեամբ: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլորին, ապա յուշանուէրներ յանձնեց Անի Կարմիրեանին, Սուհէլլա Հայէքին, Քրիսթինա Պապիկեան- Ասսաֆին, Միշել Քոսթանթինին, Վահէ Պարսումեանին և պատուելի Սեպուհ Թերզեանին:

Ձեռնարկի աւարտին խօսք առաւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ եպս. Փանոսեան, որ մեծապէս գնահատեց տարուած աշխատանքը, որովհետև հայ աշակերտներու կողքին ըլլալու պատրաստակամութիւնը տակաւին գոյութիւն ունի, որպէսզի մասնագիտական աջակցութեամբ յաղթահարեն իրենց բոլոր դժուարութիւնները և Աստուծոյ շնորհներով զարգանան, աճին և իրենց հերթին բարիք տարածեն: Սրբազան հայրը մաղթեց, որ միացեալ ճիգը հայ դպրոցի և հայ աշակերտի կեանքին մէջ բարերար հետևանք ունենայ, որ բարիք բերէ հայ ընտանիքին, ազգին և երկրին, որպէսզի իբրև ազգ յարատեւենք ու բարձր արդիւնք ապահովենք:

Աւարտին բոլոր ներկաները հրաւիրուեցան հիւրասիրութեան՝ ՔԱՀԼ-ի շրջափակին մէջ:

»